ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/51>>

ք. Երևան « 22 » «հոկտեմբեր» 2020 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է.Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՅ ՎԻ ԷՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ.Բեզիրջյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Կենտրոն վարչական շրջանի հիմնանորոգման ենթակա ներբակային աստիճանների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների** (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **666500 (վեց հարյուր վաթսունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ**:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի **3 (երեք)** չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի **0,15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական)** տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	ք. Երևան, Բյուզանդի 1/3
Կենտրոնական գանձապետարան	<<Էվոկաբանկ>> ՓԲԸ
ՀՀ 900012213576	Հ/Հ 1660001274300100
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 02707077
Է.Կիրակոսյան ----------	Գ.Բեզիրջյան----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված N 1
«22» «հոկտեմբեր» 2020 թ. կնքված
ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/51 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանում	Տեխնիկական բնութագիրը	Չ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
								հասցեն	ժամկետը
1	71241200/274	Մ. Սարյան փ. 2 շենքից մինչև Գրիգոր Հարությունյան փողոց /40մ/՝ աստիճանների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման	Տեխնիկական առաջադրանք • Գոյություն ունեցող աստիճանների չափագրություն, որտեղ նշված կլինի օգտագործված շինարարական նյութերը • Ներկայացնել իրավիճակային լուսանկարներ • Ներկայացնել տարածքի երկրաբանական հանույթ • Ներկայացնել առաջարկվող հիմնանորոգման նախագծի էսքիզային տարբերակ Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի հետ • Էսքիզային նախագիծը Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի հետ հաստատելուց հետո կատարել նախագծա-նախահաշվային աշխատանքներ • Շինհրապարակի սահմանազատում փակ ցանկապատի միջոցով • Քանդման աշխատանքներ • Նոր բետոնե աստիճանների պատրաստում, ամրանային ցանցի տեղադրմամբ • Աստիճանների բազալտե սալիկապատում H=30 մմ, անհրաժեշտության դեպքում հավելյալ մշակում • Անհրաժեշտության դեպքում նախատեսել հենապատ • Հնարավորության դեպքում գոյություն ունեցող շինանյութի վերատեղադրում կամ վերօգտագործում • Անհրաժեշտության դեպքում հին բազրիքների վերատեղադրում կամ նոր բազրիքների տեղադրում • Շին.աղբի մաքրում, հավաքում, բարձում ավտոինքնաթափի վրա և տեղափոխում թափոնատեղ:	դրամ	99500	99500	1	Տերյան 44	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 46-րդ օրացույցային օրը ներառյալ
2	71241200/275	Մոսկովյան 36,38 շենքերի /30մ/՝ աստիճանների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման		դրամ	79500	79500	1	Տերյան 44	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 46-րդ օրացույցային օրը ներառյալ
3	71241200/276	Մ.Սարյան 26-ից մինչև Կոնդ թաղամաս /30մ/՝աստիճանների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման		դրամ	89500	89500	1	Տերյան 44	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 46-րդ օրացույցային օրը ներառյալ
4	71241200/277	Այգեստան 11-րդ փ. 239շ. մինչև Այգեստան 9-րդ փ./60մ./՝աստիճանների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման		դրամ	119500	119500	1	Տերյան 44	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 46-րդ օրացույցային օրը ներառյալ
5	71241200/278	~~Պուշկին 62-ից մինչև~~ Սարյան փ. /15մ/՝աստիճանների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման	Նախագծային առաջադրանք • Նախագիծը ներկայացնել 7/յոթ/ օրինակից պատճենահանված ալբոմի տեսքով • Նախագիծը ներկայացնել էլեկտրոնային կրիչով • Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիաները, տեխնիկական միջոցները, աշխատանքային ռեսուրսները և մասնագիտական	դրամ	79500	79500	1	Տերյան 44	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 46-րդ օրացույցային օրը ներառյալ

6	*71241200/279*	*Կենտրոն Վարչական շրջանի բակ՝ Տերյան 44 /30մ/՝աստիճանների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման*	որակավորումները • Ներկայացնել նախագծի առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները • Ներկայացնել մանրամասնորեն կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորված աշխատանքային ծավալներ • Նախագիծը մշակել գործող նորմերին և կանոններին համապատասխան • Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի հետ .Նախագիծը ներկայացնել հայերեն և ռուսերեն տարբերակներով: .Աշխատանքների դիմաց վճարումը կիրականացվի դրկան փորձաքննության եզրակացություն տրամադրելուց հետո:	*դրամ*	89500	89500	1	Տերյան 44	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 46-րդ օրացույցային օրը ներառյալ
7	71241200/280	*Մ. Սարյան 15-ից մինչև Դեմիրճյան 25 /75մ./՝աստիճանների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման*		*դրամ*	109500	109500	1	Տերյան 44	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 46-րդ օրացույցային օրը ներառյալ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012213576
ՀՎՀՀ 02593108

Է.Կիրակոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ԷՅ ՎԻ ԷՆ ԳՐՈՒՊ ՍՊԸ
Ք.Երևան,Բյուզանդի 1/3
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660001274300100
ՀՎՀՀ 02707077

Գ.Բեզիրջյան_____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«22» «հոկտեմբեր» 2020 թ. կնքված
ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/51 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**			
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/274	Մ. Սարյան փ. 2 շենքից մինչև Գրիգոր Հարությունյան փողոց /40մ/՝ աստիճանների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման	99500	99500	99500	99500
2	71241200/275	Մոսկովյան 36,38 շենքերի /30մ/՝ աստիճանների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման	79500	79500	79500	79500
3	71241200/276	Մ.Սարյան 26-ից մինչև Կոնդ թաղամաս /30մ/՝աստիճանների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման	89500	89500	89500	89500
4	71241200/277	Այգեստան 11-րդ փ. 239շ. մինչև Այգեստան 9-րդ փ./60մ./՝աստիճանների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման	119500	119500	119500	119500
5	71241200/278	Պուշկին 62-ից մինչև Սարյան փ. /15մ/՝աստիճանների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման	79500	79500	79500	79500
6	71241200/279	Կենտրոն Վարչական շրջանի բակ՝ Տերյան 44 /30մ/՝աստիճանների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման	89500	89500	89500	89500
7	71241200/280	Մ. Սարյան 15-ից մինչև Դեմիրճյան 25 /75մ./՝աստիճանների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման	109500	109500	109500	109500

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
Ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012213576
ՀՎՀՀ 02593108

Է.Կիրակոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ԷՅ ՎԻ ԷՆ ԳՐՈՒՊ ՍՊԸ
Ք.Երևան,Բյուզանդի 1/3
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660001274300100
ՀՎՀՀ 02707077

Գ.Բեզիրջյան_____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան

«_____» հոկտեմբերի 2020 թ.

«ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Բեզիրջյանի նույն. քարտ՝ 005745450, տրված 29.11.2016, 009-ի կողմից, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/51 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.5 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.6 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.7 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.8 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.9 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ
ք. Երևան, Բյուզանդի 1/3
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660001274300100
ՀՎՀՀ 02707077
Գ. Բեգիրջյան----------
Կ.Տ. (ստորագրություն)

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ՝

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ «ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ 1660001274300100

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 02707077

8. Վճարողի ՀՇՁ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ **Երևանի քաղաքապետարան**

10. Շահառուի ՀՇՁ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **02593108**

12.Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **Կենտրոնական գանձապետարան**

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N)՝ **900015211429**

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 66650 (վաթսունվեց հազար վեց հարյուր հիսուն)

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ (պայմանագրի կատարման ապահովման համար)

18. Վճարման կատարման հիմքերը՝(Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

evocaBANK

ԵՐԱՇԽԻՔ N 6098/21
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **ԵՔ-ԳՀԽԱԾՁԲ-20/51** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում <<Էյ Վի Էն Գրուպ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N **ԵՔ-ԳՀԽԱԾՁԲ-20/51** պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով **«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ -ն** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 670,000 (վեց հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար) պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N **ԵՔ-ԳՀԽԱԾՁԲ-20/51** ծածկագրով կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.01.2021 թ. ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N **ԵՔ-ԳՀԽԱԾՁԲ-20/51** ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

«Էվոկաբանկ» ՓԲԸ
"Evocabank" CJSC
44/2 Hanrapetutyan Street,
0010 Yerevan, Armenia
+374 10 60 55 55
hello@evocabank.am
www.evocabank.am

№ 6098/21 1660135659
Date 22.10 2020

evocaBANK

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ _____ Ա. Եղիազարյան

Գլխավոր հաշվապահ _____ Է. Ջանինյան

ՀՀ, «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
АРМЕНИЯ, «ЭВОКАБАНК» ЗАО
ARMENIA, "EVOCABANK" CJSC
evocaBANK
00001182

«Էվոկաբանկ» ՓԲԸ
"Evocabank" CJSC
44/2 Hanrapetutyan Street,
0010 Yerevan, Armenia
+374 10 60 55 55
hello@evocabank.am
www.evocabank.am

№ 6091/21 1660135659

Date 22.10 2020